Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի աշխարհագրության (11 դասաժամ), հասարակագիտության (9 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար՝3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2023 թ. սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 5-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը **10:00**-ից **15:00**-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 13:00-ին,** ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդի Հարություն Մկրտչյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Շիրակի մարզ, Ախուրյան համայնք, գ. Վահրամաբերդ, 16-րդ փողոց, 2-րդ շենք: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 207590 հեռախոսահամարով: